# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 2022 թվականի հուլիսի 26-ից 31-ը Ռուսաստանի Դաշնություն (Վլադիվոստոկ) գործուղման արդյունքների մասին

### 1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Կարեն Գիլոյան

### 2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

### 3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ռուսաստանի Դաշնություն, քաղաք՝ Վլադիվոստոկ, հուլիսի 26-31-ը

### 4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՌԴ սպորտի նախարար Օ.Վ. Մատիցին

### 5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն 2022 թվականի հուլիսի 27-ից օգոստոսի 8-ը կայանալիք «Ասիայի երեխաներ» միջազգային մարզական խաղերին:

### 6" ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարար Օլեգ Մատիցինի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության և ՌԴ սպորտի նախարարության միջև կնքված համագործակցության ծրագիրը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրի համատեղ օգտագործման վերաբերյալ: Ստորագրված համաձայնագիրը նպատակ ունի աշխուժացնել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև մարզական կապը՝ լայնորեն օգտագործելով Ծաղկաձորի օլիմպիական մարզահամալիրի ողջ ներուժը:

ՌԴ սպորտի նախարար Օլեգ Մատիցինի հետ քննարկվել է նաև տարբեր մարզաձևերի Ռուսաստանի հավաքականներում ընդգրկված հայազգի մարզիկներին Հայաստանի հավաքականներ տեղափոխելու հարցը:

## 7" ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Պաշտոնական այցի շրջանակներում հանդիպումներ եմ ունեցել «Ասիայի երեխաներ» 7-րդ միջազգային մարզական խաղերի կազմկոմիտեի նախագահի, ինչպես նաև խաղերին ժամանած տարբեր երկրների պաշտոնատար անձանց հետ:
Ռուսաստանի Դաշնության Հեռավորարևելյան դաշնային շրջանի ղեկավարի հետ հանդիպման ընթացքում իմ ելույթում մատնանշել եմ «Ասիայի երեխաներ» միջազգային մարզական խաղերի կարևորության, մանկապատանեկան սպորտի զարգացման, միջազգային համագործակցության, երեխաների, պատանիների և երիտասարդների շրջանում բարեկամական կապերի ամրապնդման, ինչպես նաև Հայաստանի պատվիրակների՝ վերոնշյալ խաղերին մասնակցության կարևորության մասին:

## 8.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

02.08.2022թ.